ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2016 թվականի N 1257 - Ա

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱ-ՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետով՝

1. Ստեղծել «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի կառավարման կոմիտե և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ծրագրի կառավարման կոմիտեն ընդգրկում է ծրագրի հիմնական շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին՝ պատասխանատու լինելով միջգերատեսչական համակարգման ապահովման, ռազմավարական որոշումների կայացման, ներդրումային ենթածրագրերի հաստատման և ծրագրի իրականացման ընդհանուր վերահսկողության ապահովման համար:

3. Ծրագրի նախապատրաստման և իրականացման ընթացքում շահառու գերատեսչությունների համագործակցությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև ծրագրի կառավարման կոմիտեին մասնագիտական բնույթի առաջարկություններ ներկայացնելու

համար, ստեղծել աշխատանքային խումբ՝ դրանում ընդգրկելով Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, Հայաստանի Հանրապետության ընապահպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, Հայաստանի զարգացման հիմնադրամի, Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչների և, անհրաժեշտության դեպքում, հրավիրված՝ ծրագրում ընդգրկված համայնքների (ՏԻՄ-երի կողմից լիազորված անձինք) տեխնիկական ներկայացուցիչներին: Աշխատանքային խմբի ղեկավար է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահը, իսկ Հայաստանի զարգացման հիմնադրամը՝ աշխատանքային խմբի քարտուղարություն:

4. Հանձնարարել սույն որոշման 3-րդ կետում նշված պետական մարմիններին և առաջարկել սույն որոշման 3-րդ կետում նշված կազմակերպություններին 10-օրյա ժամկետում տրամադրել ներկայացուցիչների անունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 29
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2016 թ.
դեկտեմբերի 29-ի N 1257 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ

Վ. Գաբրիելյան	- ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար՝ ի պաշտոնե (նախագահ)
Ս. Կարայան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար՝ ի պաշտոնե (անդամ)
Դ. Լոքյան	- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար՝ ի պաշտոնե (անդամ)
Ա. Ամիրյան	- ՀՀ մշակույթի նախարար՝ ի պաշտոնե (անդամ)
Վ. Արամյան	- ՀՀ ֆինանսների նախարար՝ ի պաշտոնե (անդամ)
Ա. Մինասյան	- ՀՀ բնապահպանության նախարար՝ ի պաշտոնե (անդամ)
Ն. Սարգսյան	- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահ՝ ի պաշտոնե (անդամ)
Զ. Զեյթունցյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար՝ ի պաշտոնե (անդամ)
Կ. Մկրտիչեան	- Հայաստանի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ ի պաշտոնե (անդամ)
Ա. Կիրակոսյան	- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն՝ ի պաշտոնե (անդամ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ